

Ա. ՄԵՆԱԳԱԿԱՆՅԱՆ

## ՖՐԻԿԻ ՄԻ ՆՈՐԱՀԱՅՏ ԲԱՆԱՍՏԵՂՄՈՒԹՅՈՒՆԸ

(Հազարում)

1940—42 թ.թ. աշխատելով ՀՍՍՌ Մատենադարանի Ձեռագրատանը, հնարավորություն ունեցանք հավաքելու մեր միջնադարյան բանաստեղծների կյանքի և նրանց ստեղծագործությունների մասին բազմաթիվ նոր ու կարևոր տեղեկություններ: Այսպես, օրինակ, հայտնաբերված են Գր. Նարեկացու ևս երեք զանձերը, մի քանի նոր տաղերն ու մեղեդիները, Վարդան Անեռու միակ (թերի տպագրությամբ ծանոթ) ներբողի երկու ընդարձակ ու լրիվ օրինակները, Ն. Շնորհալու 150-ից ավելի նոր հանելուկները (որոնց մեջ նաև երեք հայրեն), Գրիգոր Տղայի որոնված, բայց չգտնված արձակ ու չափածո մի շարք խիստ ուշագրավ ստեղծագործությունները, Ֆրիկի, Հ. Երզնկացու, Հ. Թլկուրանցու, Տերտեր Երևանցու (նորահայտ բանաստեղծ), Առ. Բաղիչեցու, Մկ. Նաղաշի, Ղուլ-Օղլի Երզնկացու (նորահայտ բանաստեղծ), Պաղտասար Դպրի և այլ ու այլ բանաստեղծների (մինչև Մայաթ-Նովա ու Շամշի Մելքո) նորանոր ստեղծագործությունները<sup>1</sup>

Պարզվում է, որ Մկ. Նաղաշը եղել է Առ. Բաղիչեցու որդին, Բաղեր-Օղլու անունը եղել է Ղազար (և ոչ թե Բաղրամ), Ղուլ-Օղլին ծնվել է 15-րդ դարի սկզբներին և եղել է մեր մինչև այժմ հայանի ամենաառաջին աշուղը . . . և այլն:

Ահա այդ յուրորից, այս անգամ, մենք հրատարակության ենք հանձնում Ֆրիկի մի շատ արժեքավոր և անտիպ բանաստեղծությունը, որը գտնվում է մեր Մատենադարանի № 2939 ձեռագրում (զրթչն է բանաստեղծ Մարտիրոս Ղրիմեցին)<sup>2</sup> Այդ բանաստեղծությունն ունի հեակյալ խորագիրը.

«Խրատ ոգոյշան ևաչատուր Կեչառեցոյ ասացեալ կամ Ֆրրկի»:

Մանրադնին ուսումնասիրությունից պարզվեց, որ ըստ էության այդ խորագրի ասակ զետեղված է ոչ թե մեկ, այլ երկու բանաստեղծություն: Առաջինը բաղկացած է քառասողյա 10 տներից, զրված է հայրենների չափով, ունի համապատասխան սկիզբ, վերջ և բովանդակություն: Այս բանաստեղծության մեջ հեղինակի անվան հիշատակում չկա:

Երկրորդ բանաստեղծությունը սկսվում է 11-րդ տնից (անջատման համապատասխան նշանը ձեռագրում բացակայում է), բաղկացած է քառաս-

<sup>1</sup> Այդ ստեղծագործությունների մի մասն արդեն պատրաստ է հրատարակության (Մատենադարանի գծով):

<sup>2</sup> Այդ ձեռագրում գտնվող Ֆրիկի մի այլ բանաստեղծության մասին խոսել ենք 1941 թվին (տես «Սովետական գրականություն» № 12)

աողյա 36 տներին, որոնցից երեքի մեջ նշված է Ֆրիկի, որպես հեղինակի, անունը: Բովանդակությամբ, ձևով ու ամբողջ էությամբ այս բանաստեղծությունը լրիվ է և առնչություն չունի առաջինի հետ: Յուրաքանչյուր տողը բաղկացած է 8 վանկից (4—4) և իր ամբողջության մեջ իսկական ֆրիկյան ստեղծագործություն է:

Ուշադրություն դարձնելով խորագրի վրա՝ մենք եկանք հետևյալ եզրակացությունը: Հավանաբար առաջին բանաստեղծությունը պատկանում է Սաչատուր Կեչառեցու գրչին, որը նախագաղափար օրինակներում կրել է «Խրատ ոգայան Խաչատուր Կեչառեցոյ ասացեալ» խորագիրը: Հետագայում, ընդօրինակությունների ժամանակ, այդ բանաստեղծությունից անմիջապես հետո արտագրվել է Ֆրիկի վերոհիշյալ բանաստեղծությունը՝ առանց խորագրի: Հաջորդ ընդօրինակողներից մեկը, պատշաճ ուշադրություն չդարձնելով այդ խնդրի վրա, այդ երկուսն էլ ընդօրինակել է որպես մի ամբողջություն՝ առաջինի խորագրով հանդերձ: Մարտիրոս Ղրիմեցին էլ (կամ նրա նախորդը) արտագրում է նույնությամբ, բայց որովհետև նա ուշադրության է առնում խորագրում և բանաստեղծության մեջ նշված անունների (Սաչ. Կեչառեցի և Ֆրիկ) տարբեր լինելու խնդիրը, սկսում է կասկածել, թե ում է պատկանում այդ բանաստեղծությունը (մոռանալով կամ զժվարանալով որոշել, որ դրանք երկու բանաստեղծություններ են): Եվ որպեսզի հետագայում դուրսին լինի այդ խնդրի մեկնաբանումը, նա, այդ գրիչը, խորագրին կցում է «կամ Ֆրրիկի» բառերը: Այստեղից էլ պիտի եզրակացնել՝ կամ Սաչ. Կեչառեցունն է, կամ Ֆրիկինը: Այդ խորագիր կազմողը, կրկնում ենք, չի իմացել, որ գործ է ունեցել Երկու բանաստեղծությունների հետ: Ուստի և մենք այժմ այդ խնդրի վրա պիտի նայենք ոչ այնպես, ինչպես կարծել է այդ խորագիր կազմող գրիչը, այլ այնպես, ինչպես ցույց են տալիս փաստերը:

Թերևս Հմ. Գոտուրյանը մի այլ օրինակն է ունեցել ձեռքի տակ, որի հիման վրա էլ խոստացել է ապացուցել («Բազմավէպ»), որ Ֆրիկը Սաչ. Կեչառեցու գրական կեղծանունն է:

Սաչ. Կեչառեցին և Ֆրիկը տարբեր անձնավորություններ են, և այս կամ նման աղավաղված այլ փաստերն անգոր են նրանց նույնացնելու:

Վերոհիշյալ երկու բանաստեղծություններն էլ, իրենց ընդհանուր խորագրով հանդերձ, նույնությամբ, ներկայացնում ենք տպագրության<sup>1</sup>

ՆՐԱՏ ՈՐՈՅՇԱՀ ԽԱԶԱՏՈՒՐ ԿԵՉԱՌԵՑՈՑ ԱՍԱՑԵԱԼ  
ԿԱՄ ՖՐԻԿԻ

Եղբայրք, ձեզ խրատ մի տամ.  
Մի կենայք դուք շատ խոր ի քուն,  
Զարդիք և արթուն կացէք.  
Նիստ ի մօտ ենք զօրն ի մահու:

<sup>1</sup> Պատարում ենք աղաթում, կեանադրում և աստղանիշ կեաներով գատում ենք առաջին բանաստեղծությունը երկրորդից, նկատում են բերականական ու տաղաչափական խեղաթյուրումներ, որոնք թողնում ենք անփոփոխ: Հապավումներով գրված բառերը գրում ենք լրիվ:

Աշխարհս է երազ նրման,  
 Որ լինի մէկ անուշ ի քուն  
 Եւ ի քուն լինելն ի նես  
 Գանձ գըտնու թէև անհուն:  
 Խընդալոյն ցընծայր ի սիրտըն,  
 Ուրախանայր ի գանձին սիրուն,  
 Հանց համարէր ի միտքս թէ  
 Լինէր մեծ իշխան մեծատուն:  
 Երբ ի քընոյն դարդեաւ  
 Եւ տեսաւ նայ է սուտ ի քուն  
 Յանժամ փոշիման դարձաւ  
 Ի վերա իւր շատ խոնդալոյն:  
 Յորժամ հրամայէ աստուած  
 Ու խընդիր դան մարդուն հոգոյն,  
 Պահիկ մի դադար չի տան,  
 Որ տեսնու դորդիքն իւր սիրուն:  
 Զաչերն ողորմիկ ածէ,  
 Ու նայի դէմ սիրելոյն,  
 Ի ճարկէ-ճարակ ընկնի,  
 Զի գըտնու հընար գերժանելու:  
 Հառաչէ սրտէն ի վեր,  
 Կոչէ զմայր տրդակներուն  
 Ու հանց պատասխան տայ իւրն,  
 Որ նուաղի խեղճ ասելուն:  
 — Եոյ կէս մարմնոյս եմ ես,  
 Որ անձն իմ ներքև հողին.  
 Զաքեր, ձեր ծընոզն եմ ես,  
 Որ երթամ այլ ոչ դամ:  
 Հիմիկ ձեզ պէտ արէք,  
 Իմացէք չարն ու զբարին,  
 Զարին ատող լինիք,  
 Որ չի լինիք բաժին գեհենի:  
 Բարեացըն սիրող լերուք,  
 Երոժեցէք-արէք ձեզ անուն.  
 Գէմ քան ըզթարթելն ական  
 Մահն ի մօտ է ադամորդոյն:

• •

Կամիմ բան մի խօսել  
 Անցաւորիս մեղաց լիբայ,  
 Ով որ լըսէ յօժար սըրտով,  
 Թող իմանայ թէ ճշտի կուգայ:  
 Ուղիղ սրտով ականջ դնէ  
 Ու զիր հոգոյն դուռն բանայ,  
 Փառաւորի ինքն իր մըտին,  
 Ականջվընուն անուշ կուգայ:

Օրհնեալ անուն ըստեղծողին,  
 Որ հողուն հանց շնորք կուտայ,  
 Որ կու կարենք հանց բան ասել,  
 Որ իմաստնոցն դուր կուգայ՝  
     Փառք աստուծոյ անմահ բանին,  
     Որ մըտացն լոյս կուտայ,  
     Որ մենք պատմենք բանն առակաց  
     Աստընորիս թէ ոնց կուգայ՝  
 Ծով մ' էր ըխել անցաւորէս,  
 Չորեքանկիւն բաժնել է նայ,  
 Չորսն ի չորս տեղ դադարել  
 Եւ չորս անուն առել է նայ,  
     Չորսէն ի չորս ուռիկ ելել,  
     Վասն որիս բանին վերայ,  
     Չորսըն չորս ցեղ է զարդարել,  
     Ամէն ծաղկանց նըման է նայ,  
 Մէկն էր դեղին, մէկն էր կարմիր,  
 Հետ մէկ-մէկի հասել է նայ,  
 Մէկն էր կապուտ, մէկն էր կանանչ,  
 Հանց որ իրեն նըման չիկայ՝  
     Չորեք դիմաց մէկտեղ եկել  
     Աստընորիս բանին վըկայ,  
     Բարձր ահաւոր ծառմ' է ելեր,  
     Ամէն բանիւ մեզ պիտենայ՝  
 Տասերկու ճիւղք է ձրքէր  
 Համարով տերև տըւած նոցա,  
 Ամէն ճըղի՝ եոսուն տերև,  
 Որ արարածք հանքչի նայ՝  
     Երկու մըկունք առաջ ընկած  
     Հանց կու դատին ծառին վերայ,  
     Մէկն էր սև, մէկըն ըսպիտակ,  
     Մէղրը բանին ճըղին վերայ՝  
 Վերևն զմեղրը կուբանին,  
 Տակըն կըռծեն, որ կոտրի նայ,  
 Ջքաղցրութիւնն անկից ցըցընեն,  
 Որ կոտրիլն մարդ չիմանայ՝  
     Վիշապ մի մեծ և ահագին  
     Բուն էր դրել ճըղին վերայ,  
     Բերանն ի բաց ու կու հայէր,  
     Մարդ որ ընկնէր՝ կուլ տայր զնա՝  
 Մարդ մի տեսաւ զքաղցրը մեղրը,  
 Խիստ ցանկացաւ ուտել զնայ,  
 Մըտիկ չարաւ կըռծելոյն  
 Մկներն զճուղքն որ կոխել նայ՝  
     Անկարծակի ճիւղն հատաւ,  
     Մարզըն անկաւ բունին վերայ,

Վիշապըն վազեց բընէն,  
 Բերանն ի բաց. կուլ ելիտ զնայ,  
 Արդ, Ֆրիկ, զմիտքըտ բաց  
 Ու իմացիր զառակըս որ կայ,  
 Տես ու քննէ թէ զի՞նչ է ծովն  
 Ու զի՞նչ է չորս անկիւնն նըմայ,  
 Կամ ի՞նչ է չորս ուռն ելել  
 Աստընուորիս վերայ,  
 Կամ զի՞նչ է ցեղ, որ զարդարելու  
 Ամէն ծտղկանց նըման է նայ,  
 Կամ զի՞նչ էր այն չորս ցեղ վըկայն՝  
 Ի սուտ աստընվորիս վերայ,  
 Մէկտեղ եկել են՝ վըկայեն  
 Թէ աստընվորըս հանց կու գընայն,  
 Կամ զի՞նչ է բարձր, ահաւոր  
 Ծառ մի կայ մեր ճըղերն ի հեա նորայ,  
 Բարձր ահաւոր կամ տերեւնին,  
 Որ համարով եռեսնական տըված նոցայ,  
 Կամ զի՞նչ էր այն երկու մըկուռնքն,  
 Որ դատին ծառին վերայ,  
 Կամ զի՞նչ է այն քաղցր ու մեղրը  
 Կամ ի՞նչ՝ կըռծելն, որ կոտորի նայ,  
 Կամ ի՞նչ էր այն մեծ, չար վիշապըն,  
 Որ բուն դրել քեօքին վերայ,  
 Կամ ի՞նչ հայիլ օր կու մնայր  
 Մարդըն ընկնիլըն՝ կուլ տայր զնայ,  
 Է, Ֆրիկ, բաց զբերանտ  
 Ու հասկըցուր զառակըս որ կայ,  
 Զծովտ ի վեր ըեր ու այտնէ,  
 Զբանքըտ յայտնէ և պատմէ ինչ ցեղ որ կայ,  
 Ծովն է աստուռնորըս  
 Ու զարարածըս որ լինենայ,  
 Զորս անկիւնն է չորս քընճերն,  
 Որ անուռով յիշվին նոքայ,  
 Մէկն յարեւելք, մէկն յարեւմուտք,  
 Մէկըն հարաֆ, մէկըն հիւսիս,  
 Զորսէն չորս դուռն որ ելանէ,  
 Զորս տարերքն որ կայ,  
 Մէկըն դեղին, մէկըն կարմիր,  
 Հուրըն քամին, որ կու շնչայ,  
 Մէկըն որ կապուտ, մէկըն՝ կանաչ,  
 Զուրն ու հողըն որ լինենայ,  
 Զորեք դիհաց որ վըկայել,  
 Զորս եղանակըս է որ կուգայ,  
 Մէկըն աշուն, մէկըն գարուն,  
 Զըմեռն, ամառն որ կու լինել

Բարձր, ահաւոր ծառն, որ կանքնել,  
 Բոլոր տարին է մեր վերայ,  
 Երկոտասան ճիւղքն օր ձրքել,  
 Իր ամիսն է հետ նորայ:  
 Համբով տերև տրված նոցա՝  
 Հաժրով օրերս—որ կու զընայ,  
 Ամէն ճրղքի եռսուն տերև՝  
 Ամսոց օրերքն—որ կու լինայ:  
 Մըլունքն սև ու ըսպիտակ՝  
 Տիւն ու գիշերն, որ կու զընայ,  
 Մեղրը քաղցրուկ—է՛ սուտ կենցաղըս,  
 Տակի կըռծելն—նոր կոտորի նայ:  
 Վիշապըն մեծ և ահագին՝  
 Մահու օրերս է, որ կուգայ,  
 Բունն որ զրել վրայ տակին,  
 Գերեզմանն ի ներս որ տի լինայ:  
 Մարդն որ տեսաւ զքաղձրութիւնն,  
 Խիստ ցանկացաւ ուտել ըզնայ.—  
 Սուտ կենցաղս է, որ կու խարէ,  
 Զիմացնելն թէ մահ կուքայ:  
 Անկարծակի ճիւղքըն հատաւ,  
 Մարդն անկաւ բընին վերայ:  
 Այն խարիլն է յաղամորզոյս,  
 Որ սատանի բաժին կըլայ:  
 Վիշապն էր վազէր ի դուրս.  
 Բերանն ի բաց, կըլաւ ըզնայ,  
 Այն սատանայ է զըժոխոց,  
 Որ անդադար ըզմեզ կորսայ:  
 Մըսկին Պըրիկ ողորմելի,  
 Կանքնէ՛ ոտաց, աղօթք ըրայ,  
 Երեսըս գիր վերայ մոխրին  
 Ու անդադար ասայ մեղայ:  
 Սիրաբոս ամուր պահէ մեղաց՝  
 Ասալնվորիս չի ցանկանայ,  
 Որ քեզ հասնի տէրն ու օգնէ  
 Ու չի թողուր ըղքեզ որսայ:  
 Փառք փառաց թագաւորին,  
 Որ իմաստնոց զուռն բանայ:  
 Մենք զոհանամք ողորմածէն  
 Թէ մեղաւորն ոնց կու զընայ:  
 Որ զանարժանըս արժանացոյց  
 Եւ զմեզ փրկել խիստ կու ջանայ:  
 Փառք իւր անհաս մարդեղութեանն  
 Յաւետենիո յայժմ արակայ: